



Քասպ. Ապրի-ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիսի 2019 թ.

N 594-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության՝ ֆինանսների նախարարությանը՝ «Կովսական» պետական արգելոցի, «Սոսիների Պուրակ» պետական արգելավայրի և «Կաչաղակաբերդ» ազգային պարկի տարածքների քարտեզագրման՝ հողամասերի և ամրացված այլ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների պատվիրման համար Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը 2019 թվականի ինն ամսում հատկացնել 2 134 600 (երկու միլիոն հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 424100 «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում է»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մտից № 127/6.9
23 07 2019թ.
(նորոգություն)

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ